Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԿԾ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 14. Կոտայքի մարզ – ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31. 12. 2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2024-30.09.2024թթ. |
| Ներկայացման օր | 07.10.2024 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության** շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, թեյ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է Հրազդանում 36, Չարենցավանում՝ 38 շահառու:
- **Սոցիալական խորհրդատվության տրամադրման** շրջանակներում սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 8 դեպքի վարում (նոր անձնագրի ստացման կազմակերպում 2 անձի համար, 1 անձի համար օժանդակ միջոցների ստացում, 4 անձի համար ընտանիքների անապահովության գնահատման համակարգում վերափաստագրում, 1 անձի համար անվճար բուժօգնության կազմակերպում): Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 20 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- **Այլ ծառայությունների տրամադրում.**
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 17 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել:
  - Հրազդանի Ճաշարանի 7 շահառու մասնակցել է հետևյալ միջոցառումներին՝ էքսկուրսիա դեպի Դիլիջան-Հաղարծին-Գոշավանք, Գառնի Գեղարդ, «Պահանջվում է ստախոս» ներկայացման դիտում, Հրազդանի 65ամյակին նվիրված միջոցառում, շահառուների ծննդյան օրերի նշում, «Շաբաթօրյակ», «Խաղողօրհնեք», այց Հրազդանի քաղաքային զբոսայգի: Չարենցավանի ճաշարանի 18 շահառու մասնակցել է հետևյալ միջոցառումներին՝ շահառուների ծննդյան օրերի նշում, էքսկուրսիա դեպի Դիլիջան-Հաղարծին-Գոշավանք, Գառնի Գեղարդ, հոգեւոր զրույցներ քահանայի հետ:
  - 6 շահառու ( շարունակական) օգտվել է լվացքի տրամադրման ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

Միջոցառումներ՝ էքսկուրսիաներ, այց դրամատիկական թատրոն, Հրազդանի 65ամյակ, շաբաթօրյակ, այց Հրազդանի քաղաքային զբոսայգի, ծննդյան օրերի նշում, հոգեւոր զրույցներ քահանայի հետ:

(տե՛ս հետևյալ հղմամբ՝https://rb.gy/eag4lq, https://shorturl.at/pqrfU, https://shorturl.at/mFKLf, https://shorturl.at/XEUGr, https://shorturl.at/T6amP, https://rb.gy/92ctir, https://shorturl.at/LeCb4, https://shorturl.at/4wS7e, https://shorturl.at/bZd38, https://shorturl.at/fDMpE, https://shorturl.at/tbfgB, https://shorturl.at/2CKln ):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտությունները զարգացնելու, աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով ցերեկային կենտրոնի պատասխանատուի կողմից կազմակերպվել են թիմային քննարկումներ և դեպքերի ուսումնասիրություններ:
Կենտրոնի պատասխանատուն մասնակցել է ՄՍԾՏԿ-ի գործող 3 համակարգող խորհրդի նիստերին եւ հոգաբարձուների 4 նիստերին:
Մասնակցել է ՄՍԾՏԿ-ի կողմից կազմակերպված «Աշխատանքի տոնավաճառ» միջոցառմանը:
Ողջ աշխատակազմը մասնակցել է ՄԱԿ-ի կողմից կազմակերպված «Առաջին հոգեբանական օգնություն» թեմայով դասընթացի: Թիմային ոգին ամրապնդման նպատակով աշխատակազմը մասնակցել է նաեւ կազմակերպության կողմից «Աղվերանում» կազմակերպված «թիմ բիլդինգ» միջոցառմանը:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 73/74 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 46 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 27 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 11 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 4 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 23 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 42 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | 0 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 71 |
| 3. | Այլ ծառայություն (նշել)<br>Հոգեբանական ծառայություններ<br>Միջոցառումների կազմակերպում | 1<br>17<br>25 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Ե. Մշիթարյան «07» 10.2024թ